

մանութեամբ կարծես Խորենացին զառաւօտը կը նկարագրէ «բազմաստեղն լուսով» (309): Այսպիսի ջահեր աւելի ծանօթ են միջին դարուն: Բայց Գ դարէն իսկ Լուսաւորիչ Հոփոսիմեանց վկայարանները կը զարդարէ «ոսկի եւ արծաթ կանրեղաւրք լուցելովք եւ յապտերօք վառելովք եւ աշտանակօք բորբոքելովք» (570): Լաւ, մեք մոռնալու չենք՝ որ Հայրապետը զանոնք կեսարիոյ եկեղեցիներէն չբերաւ, ուր տակաին ձեռնադրուելու չէր գնացած, այլ փոխ առաւ Հայոց աշխարհիկ կեանքէն իսկ, ազնուականաց տաճարներէն փոխադրելով տէրունական տաճարին մէջ: Այսպէս քրտած էին ուրիշ եկեղեցիներ եւս. Նիւսացւոյն հայրենակիցք իրենց ճաշասրահին մէջ կը վառէին «աշտանակս» (Նիւս. Հյր. ԺԲ): Եւ դեռ Բ դարուն վահան կամսարական իւր ճգնարան աշտարակը կը պայծառացնէր լուսով «յապտերաց եւ կանրեղաց ի գիշերի» (Արշ. ԼԳ):

Հետաքրքրական է Անույ պեղումներէն ելած կիսաբեկ կանթեղ մը, յատուկ տներու լուսաւորութեան, եւ որոյ պատկերը հրատարակեց Մառ: Կաւեղէն է, գլանաձեւ ու լայնշի: Կողին վրայ ունի ձուլաձեւ ծակեր, զորս կը կիսեն վերէն վար ձգուած կանթեր, անշուշտ լարերու համար: Վերին